պի ձախ 22 վայրկեան քալելով՝ կը տեսնուի Բողոնիկն, հին Բուղոնը, Ուստի Պէյթ Հանինայի խորը, Սորեկի հովիտը և լերան մը գագաթը՝ Քասթալը։

Ս. Յովհաննու Մկրտչի ժայռը. — Կէս ճանապարհին Այն Քեարիմի և Անապատին միջև, ձախին կը հանդիպինք ժայռի մը որ կը կոչուի Ս. Յովհաննէս Մկրտչի ժայռ։ Ըստ աւանդութեան՝ կ'ըսուի թէ Զաքարիա այս ժայռին վրայ հանգչած է երբ ճանապարհէն կ'անցնէր։ Ոմանք ալ կ'ըսեն թէ այս քարը Յովհաննու Մկրտչի աթոռն էր, և ուրիշներ՝ թէ այս ժայռին վրայէն ապաշխարութիւն կը քարոզէր ժողովուրդին։

Այս ժայռէն մինչեւ Ս. Կարապետի առաջին անապատը կէս ժամ կը տևէ։

Ս. Կարապետի առաջին անապատը. — Ս. Ղուկաս միակ համարի մը մէջ կը համառօտէ Յովհաննէս Մկրտչի առաջին երեսուն տարիները. «Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով, եւ էր յանապատս մինչեւ յօր երևելոյ նորա՝ Իսրայէլի» (Ա. 80)։ Աւետարանը տարակոյս չի թողուր թէ Յովհաննէս իր տղայութեան իսկ անապատ քաշուեցաւ։ Որոգինէսի և Յովհան Ոսկեբերանի կարծիքն այն է թէ Յովհաննէս իր առաջին տարիներուն թողուց հայրենի տունը։ Եկեղեցին իր երգերովն ալ կը յիշէ թէ Յովհաննէս իր մատղաշ տարիքին մէջ անապատի մէկ այրին մէջ բնակեցաւ։

Յովհաննու տղայութեան անապատը ի հարկէ պէտք է փնտռել իր ծնողաց բնակարանին մօտ, միշտ պատրաստ՝ ի հարկին անոր օգնելու և պաշտպանելու զայն։

ԺԲ. դարէն առաջ, ո՛ և է հեղինակ չի յիշեր ա-